



ՍԵՀԸՎ ՎԵՐԴԱՊԵՏ ԲԱՂԳԵՍԵՐԵՆ

Ե Ի

ԱՐԽԱՆԵՐԻ ԱՐԴԵՊԻՍԿՈՎՈՍ ԳԵՐԹԵՆ

Կարճ ժամանակի մէջ միմեանց յետեւից յաւիտենականութեան գիրկը գնացին մեր միաբանութեան անդամներէց երկուսը. յունուարի 24-ին վախճանուեց Տփլիսում Ճալէթու վանքի վանահայր Սահակ վարդապետ Բաղդասարեանց և փետրուարի 7-ին Սինոդի անդամ Արիստակէս արքեպիսկոպոս Դաւթեան: Երկուսն էլ հին սերնդի մէջ բաւական աչքի ընկնող տեղ են բռնել ոչ միայն իրենց վարած պաշտօններով, այլ և գրական աշխատութիւններով:

Սահակ վարդապետը իւր ուսումնս ստացել է ժառանգաւորաց դպրոցում, ուր աւարտելուց անմիջապէս յետոյ՝ 1864 թ. դեկտ. 10-ին միաբանութեան մէջ է ընդգրկուած: 1866 թ. մայիսի 15-ին ձեռնադրուել է սարկաւաք, իսկ 1872 փետր. 19-ին արքեպ. Ձեռնադրութիւնից անմիջապէս յետոյ՝ նշանակուել է Շամախու Կոնսիստորիայի անդամ և մասնակից է եղել այնտեղի հասարական գործերին հանգուցեալ Յովսէփ վարդապետ Փինաշեանի հետ, իբրեւ ուսուցիչ. 1874 թ. ապրիլի 8-ին ստացել է վարդապետական աստիճան. 1878 թ. յունուարի 30-ին նշանակուել է Ն. Նախիջևանի Ս. Խաչ վանքի վանահայր, կատարելով վանական դպրոցում նաև կրօնի և հայերէնի դասատուի պաշտօն. 1881 թուին նշանակուել է «Արարատ»-ի խմբագիր, որ վարել է 2½ տարի. 1883 թ. յունիսի 20-ին նշանակուել է Ալէքսանդրապոլի յա-

Ջորդ, իսկ 1885 թ. նոյեմբ. 10-ին գաւաղանակիր և դիւ-
ւանապետ Հանգուցեալ Մակար կաթուղիկոսի հայրապե-
տութեան ամբողջ ընթացքում: Նա կրօնի դասեր ևս
ունէր ճեմարանի դպրոցական բաժնում: Կաթուղիկոսի
մահուանից յետոյ՝ 1891 թուին Սինոդի հրամանով նո-
յեմբ. 8-ին որպէս պատիժ ուղարկուած է Սեանայ վան-
քը, որտեղից 1892 թուին նոյեմբ. 10-ին փոխադրուում է
Սաղիանի Ս. Ստեփանոս վանքը իբրեւ միաբան: 1894 թ.
մարտի 23-ին նշանակուում է Նուխուայ յաջորդ, իսկ 1897 թ.
հանգուցեալ Մկրտիչ կաթուղիկոսի կոնգալով փոխադրուում
է Շուշի, որպէս Կոնսիստորիայի նախանգամ: 1903 թ.
Ալէքսանդրապոլի յաջորդ էր երկրորդ անգամ, որտեղից
եկեղ. կալուածների գրաւման ժամանակ աքսորուեց կա-
ռավարութեան կողմից Օրենքուրդ քաղաքը: Աքսորից վե-
րադառնալուց յետոյ 1906 թ. փետր. 15-ին Սինոդի
հրամանով նշանակուում է Ճալէթու վանքի վանահայր
Նուխուայ վիճակում:

Ամսոյս 7-ին երկարատեւ հիւանդութիւնից յետոյ
խաղաղ հանգեաւ ի Տէր Սինոդի անդամ Տ. Արիստակէս
Արքեպիսկոպոս Դաւթեան, 65 տարեկան հասակում: Նա
ծագմամբ Լօռեցի էր, բայց փոքր հասակից ընկել էր Կ.
Պօլիս և այնտեղի Օրթոդոքսի դպրոցումն էլ 1850—1860
թթ. ստացել իւր ուսումը: Նոյն թուին նա էջմիածին է
գալիս և փետրուարի 27-ին սարկաւազ ձեռնադրուում,
իսկ 1863 թ. փետր. 14-ին հանգուցեալ Մակար կաթու-
ղիկոսի ձեռքով արեղայ: Հանգուցեալը Մատթէոս կա-
թուղիկոսի մերձաւորներից մէկն էր և հաւատարիմ ծա-
ռայութեան համար վարձատրուել է նորա կողմից 1764
թ. ակնանակուող լանջախաչով և ծաղկեայ վիլլոնով: 1865
թ. մայիսի 28-ից մինչև 1866 թ. հոկտ. 6-ը կատարել է
մատենագործարանապետի պաշտօն, իսկ 1867 թ. նոյեմբերի
5-ին Սինոդի հրամանով նշանակուում է Նուխուայ վիճակի
յաջորդ: Գէորգ Դ. կաթուղիկոսի հրամանով 1868 թ.
հոկտ. 3-ին վարդապետական աստիճան է ստացել Պետ-

րոս եպիսկոպոս Վեհապետեանից։ Նուխուց 1870 թ. նոյեմբ. 23-ին փոխադրուած է Ն. Նախիջևան Հոգևոր Կառավարութեան նախանդամի պաշտօնով։ Այնտեղ 1876 թ. յունուարի 27-ից մինչև 1879 թ. փետր. 16 կատարել է եկեղ.—ծխական դպրոցների տեսչի օգնականի պաշտօն։ 1883 թ. ապրիլի 15-ին նշանակուած է Էջմիածնում Տպարանական ժողովի նախագահ և վարում է այդ պաշտօնը մինչև 1895 թ. դեկտ. 25-ը։ 1883 թ. մինչև 1886 թ. ճեմարանի դպրանոցական բաժնի դասատու էր։ 1884 միաբանութեան կողմից պատգամաւոր էր կաթուղիկոսական ընտրութեան ժամանակ, նոյն պաշտօնը կատարել է նաև 1892 թ. Հանգուցեալ Մկրտիչ Ա. կաթուղիկոսի ընտրութեան ժամանակ։ 1886 թ. յունիսի 8-ին Մակար կաթուղիկոսի ձեռքով եպիսկոպոս է ձեռնադրուած, իսկ նոյն թուի նոյեմբ. 13-ին կաթուղիկոսի առաջարկութեան համաձայն, հաստատուել է Սինոդի տնդամ։ 1887 թ. յունիսի 15-ին վարձատրուել է Մակար կաթուղիկոսի կողմից եպիսկոպոսական պնակէով։ 1898 թ. արքեպիսկոպոսական աստիճան է ստացել, իսկ 1901 թ. մարտի 15-ին վարձատրուել է Ստանիսլաւի առաջին կարգի աստիճանով։ Սարգիս Արքեպիսկոպոսի մահունից յետոյ մինչև 1906 թ. փետր. 16-ը Սինոդի նախանդամ էր։ Հանգուցեալը երկար ժամանակեայ գործավարութեամբ իբրև Սինոդի տնդամ ձեռք էր բերել բաւական հմտութիւն և փորձառութիւն։

Նա թողել է նաև գրական աշխատութիւններ. ա) Աղանդաւորք եւ մոլութիւնք նոցա ի վարդապետութիւնս հաւատոյ. 1891. բ) Հայաստանեայց եկեղեցու ժողովների կանոնները, որից մի հատուած միայն տպուել է Լուսալուս։ Ամբողջի տպագրութիւնը պէտք է սկսուէր վերջին ժամանակներս, բայց հիւանդութիւնն ու մահը արգելք եղան։

Հանգիստ ենք մաղթում մեր հանգուցեալ միաբանակիցներին։